ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N --- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ
ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հրաչյա Ներսիսյան փողոցից դեպի Ավետիս Ահարոնյան փողոց ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել գրականագետ, դերասան և ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի դոցենտ Լևոն Ներսիսյանի անվամբ՝ «Լևոն Ներսիսյան փողոց»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որպես Երևանի ավագանու անդամ, նաև ինձ դիմած ԵՊՀ մի խումբ շրջանավարտների անունից առաջարկում եմ՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հրաչյա Ներսիսյան փողոցից դեպի Ավետիս Ահարոնյան փողոց ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել մեծանուն գրականագետ, դերասան, Երևանի պետական համալսարանի վաստակաշատ դասախոս, դոցենտ Լևոն Ներսիսյանի անվամբ:

Ս.թ. դեկտեմբերի 24-ին նշվում է Լևոն Ներսիսյանի 90-ամյա հոբելյանը:

Լևոն Հրաչյայի Ներսիսյանը (1931-1999թթ.) ունենալով մեծ ավանդ գրականագիտության և գեղագիտության զարգացման ոլորտում, ինչպես նաև տաղանդավոր դերակատարմամբ հանդես գալով «Երկունք», «Ապրիլ», «Երջանկության մեխանիկա», «Վերածնունդ» ֆիլմերում, միևնույն ժամանակ անջնջելի հուշեր է թողել ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում իր դասախոսություններին երբևէ մասնակցած սերունդների մոտ: Բանավոր խոսքի արտիստական բարձր վարպետությամբ անցկացվող նրա դասախոսություններին ներկա էին լինում ոչ միայն ռոմանագերմանական ֆակուլտետի, այլ՝ ԵՊՀ այլ ֆակուլտետների, նույնիսկ՝ այլ բուհերի ուսանողները: Հաղորդակցման բացառիկ տաղանդով օժտված Լևոն Ներսիսյանին արդարացիորեն կարել է դասավանդման վարպետության գործում մինչ օրս չգերազանցված ֆենոմեն համարել: ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում ուսանողների կուռքը դարձած Լևոն Ներսիսյանի անվամբ անվանակոչվել է լսարան: 1994 թ.-ին Լևոն Ներսիսյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

Լևոն Ներսիսյանը մահացել է 1999 թվականին:

Մեծանուն հոր՝ Հրաչյա Ներսիսյանի անվան փողոցից սկիզբ առնող այս հատվածը որդու՝ Լևոն Ներսիսյանի անվամբ անվանակոչելն այդ տաղանդաշատ ընտանիքի յուրահատուկ տոհմածառային քարտեզ կխորհրդանշի Երևան համայնքում, որտեղ ապրել և ստեղծագործել են մեծանուն հայրը և որդին:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Լևոն Ներսիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Լևոն Ներսիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ